

այսպէս. «Կարմիր արխաներով ծածկել զանասունն, եւ յեղջիշրսն նարօտ» կապել (Ընդհ. 160): Կոնիբիր՝ պարսեան 1331ի մաշտոցին մէջ կը կարդայ նաեւ «Կարմիր եւ բոշոր» (Ծիս. 5), որոց երկրորդը կրնայ պահպանակ գիր մը լինել՝ շատ ծանօթ մեր մէջ (Երդ. 243): Սուան Յովհ. դամասկացի իւր հակառակորդի աչերով աւելի մանր կը տեսնէ ու կը նկարագրէ այդ պաճուճանքը: Կը բերեն, կ'ըսէ, արջառներ կամ ոչխարներ, ու կը զարգարեն՝ անոնց եղջերաց կապելով ներկուած «Կարմիր եւ սպիտակ բոշորս»: Եւ նոր պարագայ մը, եղջիւրներէն կը կախեն «միրգս զանագանս», եւ եղջերաց միջեւ կը գետեղեն «մումեղեկս» (Լոյս, 1905, էջ 1114):

Շնորհալին կ'ուզէ՝ որ Մաշտոցին հրահանգը նորամուտ լինի «ի տգէտ քահանայից», եւ թէ «ըստ հնոյն օրինի» էր այդ ծէսը (Ընդհ. 160): Բայց ես կը զանազանեմ: Մաշտոցին գրութիւնը կրնայ արդարեւ եկամուտ լինել, սակայն ոչ եւ սովորոյթը մեր եկեղեցւոյ մէջ, որ շատ հին է եւ նոյն իսկ ներանուսակսն ծագումն ունի: Զայս կ'ըսեմ, զի դեւտական զոհերը չունէին այդպիսի պճնում մը: Արդարեւ վեր կ'ելնենք մինչեւ Տրդատայ հայրը՝